ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/124

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Մասնակից՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցում, 15Դ 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.05.2020թ.-ի թիվ 26/26-1/6674-2020 գրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.04.2020թ.-ի թիվ Ե/40/666-20 գրության հիման վրա, 06.05.2020թ.-ին «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.05.2020թ.-ին:

07.05.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/124 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.05.2020թ.-ին և 05.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 22.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.06.2020թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 30.04.2020թ.-ի թիվ Ե/40/666-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար 15Դ100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռք բերման նպատակով հրապարակվել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ են ներկայացրել Финансово-промышленная компания «Гросс», «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ, «ԱՐԱՄ ՁԱՐԳԱՐՅԱՆ» Ա/Ձ, «էյչ Գրուպ» ՍՊԸ, «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ և ԱՁ «Ռաֆայել Գրիգորյան»: Գնահատող հանձնաժողովի 23.03.2020թ. թիվ 2.1 որոշմամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ ճանաչվել է ընտրված մասնակից և ս/թ ապրիլի 6-ին պայմանագրի նախագիծը ուղարկվել է «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ մասնակցության հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, որի ստորագրված տարբերակը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, սույն ընթացակարգի հրավերի 8.5 կետում նշված ժամանակահատվածում, «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն չի ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին: Գնահատող հանձնաժողովի ս/թ ապրիլի 28-ի թիվ

3 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ մասնակցության հայտը մերժվել է և «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.05.2020թ.-ին գրությամբ դիմել է «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2020թ.-ի թիվ 26/26-1/6674-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 15Д 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.03.2020թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն

ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 06.04.2020թ.-ին Մասնակցի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ նշված էլ. փոստի՝ blockchaintenders@gmail.com հասցեին ուղարկել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնելով, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվի պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի ապահովումը:

Հանձնաժողովի 28.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն պայմանագրի ստորագրված տարբերակը սահմանված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին և գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն չի հրապարակել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2020թ.-ի թիվ 26/26-1/6674-2020 գրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը,

- 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

- 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

- 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

- 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի.

- 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա

ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 15Դ 100 դիզել գեներատորային կայանի պահեստամասերի ձեռքբերման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 23.03.2020թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում չհրապարակելով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, 06.04.2020թ.-

ին Մասնակցի՝ ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարությամբ նշված էլ. փոստի՝ blockchaintenders@gmail.com հասցեին ուղարկել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնելով, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-35/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն պետք է ներկայացնի պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի ապահովումը:

Հանձնաժողովի 28.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն պայմանագրի ստորագրված տարբերակը սահմանված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին և գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը չկայացած է հայտարարել գնման ընթացակարգը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Պատվիրատուն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր էր տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ի մասի դրույթները: Պատվիրատուն չհրապարակելով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ չի պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու իրավասության չի ծագել, ընդ որում, հատկանշական է նաև, որ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2020թ.-ի թիվ 26/26-1/6674-2020 գրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/124 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**